ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 76-Ա

«01» նոյեմբերի 2019 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ(ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՐԵԳՆԱԴԵՄ) ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,03887 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող 0,03887 հեկտար հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտությունների հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն, անճշտությունը ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի (բնակավայր Արեգնադեմ)վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,03887 հեկտար հողամասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում հողամասի նկատմամբ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 6	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝			
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝			
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝			
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝			
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝			
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«01» նոյեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա